600.0312.16.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2016 թվականի №312Ա
քաղ. Երևան

«ՕԼԻԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2013 թվականի հոկտեմբերի 23-ին «ՕԼԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №1061 լիցենզիան,

բ) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողները պարտավոր են ժամանակին և լրիվ վճարել Օրենքով սահմանված պետական տուրքերը և տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները,

գ) 2015 թվականի հունվարի 1-ի խմբագրությամբ Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում պետական բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին, իսկ 2015 թվականի հունվարի 1-ից գործող խմբագրությամբ Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ նշված գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.15 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին: Նշված հոդվածով նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չվճարված

(չգանձված) պետական տուրքի գումարի նկատմամբ՝ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի քան 365 օրվա համար,

դ) Ընկերությունը 2014 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 16-ը չի վճարել լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված տարեկան պետական տուրքի գումարը, որը Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասի 9.1.1.4 կետի համաձայն՝ մեկ մարզի տարածքում ցանցի շահագործման գործունեության իրականացման համար սահմանված է տարեկան հարյուր հազար դրամ,

ե) Ընկերության կողմից Օրենքի պահանջների խախտման՝ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված տարեկան պետական տուրքի չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 21-ին Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ի №ԱԲ-2052Հ գրությամբ,

զ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

է) Իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար սահմանված տարեկան պետական տուրքի և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, այն է՝ չի վճարել 2014 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 16-ը հաշվարկված չորս հարյուր երեսունյոթ հազար հարյուր դրամ պարտքը, որից երեք հարյուր հազար դրամը լիցենզիայի տարեկան պետական տուրքի գումարն է, իսկ հարյուր երեսունյոթ հազար հարյուր դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 9-րդ կետը և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել Վայոց ձորի մարզի տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №1061 լիցենզիայի գծով տարեկան պետական տուրքի մասով 2014 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 16-ը հաշվարկված չորս հարյուր երեսունյոթ հազար հարյուր դրամ պարտքը, որից երեք հարյուր հազար դրամը լիցենզիայի տարեկան

պետական տուրքի գումարն է, իսկ հարյուր երեսունյոթ հազար հարյուր դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, ինչպես նաև 2016 թվականի նոյեմբերի 16-ից մինչև սույն կետում նշված գումարի փաստացի վճարման օրը երեք հարյուր հազար դրամ տարեկան պետական տուրքի գումարի նկատմամբ Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժը:

2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում բողոքարկել այն Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 նոյեմբերի 2016թ.
ժամը 16^{00}